№ 166 Սեպտեմբերի 5 (17) 1881 Սեպտեմբերի 5 (17) № 166

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլ, կէս տարվանը 6 բուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաազգաց գիր գրում են ազգակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար գնվում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Հայոց թատրոն։ Նամակ Գօրուց։ Նամակ Խմբագրին։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ «Հայրենիք» լրագրի յօդուածը։ Անգլիա։ Ֆրանսիա։ Բոլղարիա։ Ամերիկա։ Ցունատան։ Նամակ Գերմանիայից։ —ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՕՆ

—

Ամսոյս 3-ին Թիֆլիսի Ամարային թատրոնում տրվեցաւ Հայոց առաջին ներկայացումն, որով սկսվեց այս տարուայ շրջանը։ Կատէրին Հօվարդի դերը „Հենրիխ VII“ Դիւմայի պիէսայի մէջ կատարեց առաջին անգամ դերասանուհի Հրաչեայ։ Սա հրաւիրված է դրամատիկական դերերի համար, ուրեմն օր. Աստղիկի ամպլուայի համար։ Թէև առաջին անգամից դժուար է որոշ եզրակացութեան հասնել այս հրաշակաւոր դերասանուհու ընդունակութիւնների մասին, բայց դարձեալ կարելի է ասել, որ նա աչքի է ընկնում իր ճոխ միմիկայով։ Սրա գլխաւոր պակասութիւնը ձայնն է, եթէ միայն տիկնոջ այդ պակասութիւնը ժամանակաւոր չէ։ Ասում են, իբր թէ պատուելի դերասանուհին մրրսելուց է կորցրել իր ձայնը։ Այս անգամ մենք կը բաւականանք մի նկատողութիւնով պատուելի տիկնոջը. իզուր է աշխատում տ. Հրաչեան, որքան կարելի է, երկար մնալ ավանսցէնայի վրա։ Ավանսցէնայի վրա խաղալը թէև շատ է օգնում էֆֆէկտներին, բայց դա մի այնպիսի պակասութիւն է առաջնակարգ դերասանուհու համար, որից, մեր կարծիքով, հարկաւոր է հրաժարվել։

Պ. Ադամեան արդէն վաղուց սիրելի է դարձել մեր հասարակութեան և աւելորդ է նկատել, որ երբ Ադամեան բեմի վրա է, ամբողջ հասարակութեան ուշադրութիւնը գրավում է նրանով, բայց ափսոս որ պ. Ադամեանը ըստ իր սովորութեան շատ շուտ շուտ է կիտում իր յօնքերը և անուղղակի կերպով թափ է տալիս իր մազերը։

Պ. Մնակեանը Հենրիխի դերում աշխատում էր կոմիկ չերևալ և չը փչացնել իր դերը և այդ դրան բաւական յաջողվեց։ Ներկայացումն ընդհանրապէս յաջող էր, բայց ի՞նչ օգուտ այդ տեսակ յաջող ներկայացումներից։ Միշտ թոյն և թոյն...։ „Մշակը“ շատ է խօսացել այդ թունաւոր ներկայացումների մասին, որոնք թունաւորում են Թիֆլիսի հասարակութեան թէ զրպանները և թէ նրանց բարոյականութիւնը։

***

ՆԱՄԱԿ ԳՕՐՈՒՑ

—

Օդոստոսի 31-ին

Բաղդաւոր է այն քաղաքը, որտեղ լինում են թատրոնական ներկայացումներ, գրականական երեկոներ, դասախօսութիւններ և այլն. անբաղդ է այն քաղաքը, որտեղ սրանցից ոչ մինը չէ լինում։ Գօրին պատկանում է այս վերջին քաղաքներին։ Այստեղ ամենևին չեն լինում ոչ գրականական երեկոներ և ոչ դասախօսութիւններ, միայն երբեմն երբեմն լինում են թատրոնական ներկայացումներ վրացերէն լեզուով, իսկ հայերէն լեզուով ներկայացումներ ամենևին չեն եղել (գոնէ ես չեմ յիշում,) որովհետև չը կան այստեղ այնպիսիներ, որոնք կարողանային ներկայացնել այդ լեզուով։

Ամսոյս 27-ին մեր քաղաքը բաղդ ունեցաւ տեսնել հայերէն ներկայացումն Խորհիւ պ. պ. Գր. Խիթարեանցի, Յ. Ամիրաղեանցի և Մ. Բաղդասարեանցի։ Ներկայացրին «Դալալ Ղազօ» և «Երկու քաղցածներ» վոդէվիլները։ Ի հարկէ այստեղ դեռ վաղ է դրամաներ ներկայացնել, պէտք է այնպիսի պիէսաներ ընտրել, որոնք փոքր ի շատէ հասկանալի են հասարակութեան։ Պէտք է ասած որ ներկայացումն շատ լաւ անցաւ և հանդիսականներն էլ գոհ մնացին՝ չը նայելով որ նրանցից մի քանիսները հայերէն չէին հասկանում։ Շատ լաւ ներկայացրին իրանց դերերը «Դալալ Ղազօի» մէջ—Ղազօի դերը պ. Յ. Ամիրաղեանց, Սինդուխտի դերը օր. Հռիփսիմէ Զաղուռեանց, Կիվկիվի դերը պ. Մ. Բաղդասարեանց, Յովհաննէս Դարաչիչագեանի դերը պ. Գր. Խիթարեանց և Ցքվիտաձէի դերը պ. Ա. Արշակունի։ «Երկու քաղցածների» մէջ—Կակուլու դերը պ. Ա. Արշակունի, պօլսեցու դերը պ. Մ. Բաղդասարեանց, Դանտէի դերը պ. Գր. Խիթարեանց և Ֆրանսուայի դերը պ. Յ. Ամիրաղեանց։ Հանդիսականները բաւականաչափ էին, որոնց վրա պ. պ. դերասանները զօռով ծախեցին տոմսակներ, մէկին ստիպելով, միւսին ամաչցնելով, բայց վերջը հանդիսականները չը փոշմանեցին և հայերէն ներկայացումն դերազանցեցին վրացերէնից և խնդրեցին որ դարձեալ ներկայացումն տան, բայց տարաբաղդաբար դերասանները ուսուցիչներ լինելով՝ չատպում էին գնալու իրանց տեղերը, և այսպէս չը կարողացան գօրեցիների ցանկութիւնը կատարել և խոստացան միւս տարի տալ մի քանի հայերէն ներկայացումներ։

Բայց պէտք է ասած որ գօրեցիների մէջ այսպիսի օգտակար բաների մէջ հռանդ չը կայ, չեն սիրում գնալ թատրոն. սրանք ուրախութեամբ տաս մանէթներով կը մսխեն քէֆի և թղթախաղի մէջ, իսկ մի բուբլ կամ 50 կոպէկ չեն տայ այսպիսի օգտակար բաների համար։

Գօրեցիները սեփական բեմ ունեն բօտանդա կոչված այգիում, որ գտնվում է Քուրի ափը, և ով որ այնտեղ ներկայացնում է պէտք է քըրէհ տայ 10—15 ր., բայց արդեօք այդ փողերը գործ են դնում բեմաշինութեան համար, դա մի հարց է։ Որ տեղից է երևում թէ գործ են դնում. վարագոյրն ու չալալէրները պատռած, նստարանները կոտրած, դիկորացիաներ չը կան, գործողութիւնների ժամանակ ոչինչ փոփոխութիւն չէ տրվում բեմին։ Իսկ այդին չինում են, փողը շատ է մխսվում քաղաքից, չինած ոչինչ չէ երևում, մնկած են ծառեր և մի քանի ծաղիկներ, իսկ ման զալու տեղը.... խորհուրդ ենք տալիս դումայի անդամներին, որոնց ձեռքն է գնում բեմի քրէհը այդ փողը գործ դնեն բեմի համար, դարդարեն այնպէս, ինչպէս հարկն է։

Գօրեցի

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Մոսկվա, 28 օգոստոսի

Մոսկվայի համալսարանի մի քանի ուսանողներս կարդացինք «Մշակ» ազգաշահ լրագրիդ 153 համարում պ. Ալէքսանդր Նաջարեանցի Կիսլովոդսկից ուղարկած նամակը, որի մէջ պարոնը յայտնում է այն լուրը, որ Մանկունի եպիսկոպոսի պատուին մէկ արձան են կառուցանում։ Արդարև շատ ուրախալի է այս երևոյթը, որ հայերս սկսում ենք սովորել յարգել այն մարդկանց յիշատակը, անմահացնել այն անձանց անունները, որոնք իրենց անդուլ աշխատութեամբ զիշեր, ցերեկ քրտինք թափելով պաշտպանում են հերոսաբար ազգի կենսական շահերը, մղում են ազգը յառաջադիմութեան ճանապարհի վրա, լուսաւորելով նրան և ժամանակից գաղափարներ նրա մէջ տարածելով. այսպիսի անձինք արժանի են կատարեալ համակրութեան։ Սրանց մէջ անկասկած առաջին տեղը բռնում է հայերիս մէջ «օրուան հերոս» դերապատիւ Մանկունի սրբազանը, այս չնչաչարիկ, ամենայն առաքինութեամբ լի, միանգամայն կատարելութեան տիպար դարձած, բայց դժբաղդաբար մինչև այժմ անգոհունակ հայ ժողովրդից և նրա ինտելլիգենցիայից, մանաւանդ ուսանողութիւնից, մոռացված մեծարելի հոգևորականը, որը համարեա կմախք է դարձած այն չարչարանքներից, որ նա կրում է, հայ ազգին հոգևոր կերակուր մատակարարելով, նրա հոգևոր շահերի վրա օր ու գիշեր մտածելով, նրա անթիւ թշուառութիւնները կարեկցաբար ամբելով և սոսկալի վէրքերին սպեղանիներ դնելով։ Այո, սրբազանը մոռացված է իր ժամանակակիցներից։ Ով չէ յիշում այն քաղցր հայրական ընդունելութիւնը, որ այս անմոռաց հովիւը ցոյց տուեց Ալաշկերտցի դպրեվանականներին. ով կը մոռանայ այն բարի և ազդաշէն նպատակները, որոնցով զինուորված գնաց մեր սրբազան հայրը Կ. Պոլիս մեր միակ—պահապան հրեշտակի—Ներսէս սրբազան պատրիարքի հետ խորհրդակցելու։ Վերջապէս ում յիշողութիւնից է դուրս եկել այն խելացի մտացածին կարգադրութիւնները, որով օրական հարիւրաւոր ուսումնական, ազգի սիրովը վառված ժողովրդի շահերին ջատագով տիրացուներ քահանաներ են ձեռնադրվում ժողովրդին հոգևոր հաց հայթայթելու նպատակաւ, դեռ ես թողնում եմ ուրիշ յարգարժան գործերը յիշատակել։ Այս ամենը իրաւունք է տալիս, այո, մեր սրբազան հայրիկին արժանաւոր յարգը և պատիւը տալու հայ ազգից, ուստի և մենք՝ ուսանողներս մեծ պատիւ համարելով մեզ մասնակցել այդ մեծ ընդհանուր, ազգային տօնին, որը կը լինի արձանի բացման հանդէսը, ուղարկում ենք խմբագրութեանդ մեզանում հանգանակութեամբ ըստ բարի կամաց և ցանկութեան հաւաքած 5 կոպէկը, որը, յուսով ենք, չէք զլանայ ուղարկել ուր հարկն է։ Յիշատակ սրբազան հօր մերոյ օրհնեալ և անմահ եղիցի։

Խնդրում ենք, խմբագիր տէր, տպագրել այս մեր երկտող յօդուածը ի խրախոյս հայ ժողովրդի, որ այսպէս պատրաստականութեամբ սկսում է անմահացնել իր մեծ բարերարների յիշատակը։

Զորս ուսանողներ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԵՐԵՒԱՆԻ մէջ հրատարակվող «Պսակ» լրագիրը յայտնում է թէ եկող թուականից հրատարակվելու է շաբաթը երկու անգամ։

—

Ներկայ թուից կը սկսի հրատարակվել Երևանում, քաղաքային բժիշկ Լեոն Տիգրանեանի խմբագրութեամբ «Առողջապահական թերթ» մի ամսեայ հանդէս հետևեալ պրօգրամայով։ I. Պետական կարգադրութիւններ ժողովրդի առողջութեան վերաբերութեամբ։ II. Առողջապահական յօդուածներ աշխարհիկ ոճով. ժողովրդի առողջապահական պայմանները. բժշկական արհեստը ժողովրդի մէջ. բժշկականութիւնը ժողովրդացրած։ III. Բժշկական մատենախօսութիւն։ IV. Խառն լուրեր։ V. Յայտարարութիւններ։ Հանդիսի տարեկան գինը 3 բուբլ է, կանխիկ վճարելի։ Գրվել կարելի է Երևանում, խմբագրատան մէջ, իսկ օտարաքաղաքացիք պէտք է դիմեն հետևեալ հասցէով։ Эривань, въ редакцію журнала «Гигіеническій Листокъ»

—

«Պսակ» լրագրում կարդում ենք հետեւեալը։ «Մեզ լուր են հաղորդում, որ Գէորգեան ճեմարանի ապագայ վերատեսուչ պ. Արշակ Նահապետեան, բացի 5000 բուբլ տարեկան ռոճիկից, ստանալու է նոյնպէս 700 բուբլ ճանապարհածախս։ Ի՞նչ մարդասէր վարմունք դէպի ազգից կոպէկներով ժողոված դումարները։»

—

Հետեւեալը կարդում ենք դարձեալ «Պսակի» մէջ։ «Լսում ենք որ սեպտեմբերից Գէորգեան ճեմարանում ի թիւս այլոց, համաձայնվել են ուսուցչական պաշտօններ վարել պ. Սեդրակ Մանդինեանց 4000 բուբլ ռոճկով, Փիլիպպոս Վարդանեան 3000 ր. ռոճկով, Կարապետ Կոստանեանց 3000 բուբլ ռոճկով, ի հարկէ, բացի իրանց ճանապարհածախսերից։»

—

Վիէննայում հրատարակվող «Ժուրնալ դ'Օրիան» յայտնում է իր վերջին 36 համարում որ թոյլատրութիւն է ստացել ազատ կերպով մտնել Ռուսաստանը, ի հարկէ ենթարկվելով նոյն պայմաններին, որոնց ենթարկվում է ամեն արտասահմանեան լրագիր, այն է ցենզուրայի քննութեանը։

—

Մեզ գրում են Բօրչալուի գաւառի Զանախչի գիւղից, որ օգոստոսի 20-ին այդ գիւղի մի 7 տարեկան երեխայ կորել է անտառում։ Մինչև այժմ չեն կարողանում գտնել կորած մանուկը։ Նրա հայրն ու մարը վերջին ծայր յուսահատութեան մէջ են և ամբողջ օր թափառում են շրջակայ անտառներում։ Ոստիկանութիւնը անդօր է խուզարկութիւններ անել և գտնել կորած երեխային։ Ի հարկէ նախապաշարված ժողովուրդը սկսում է առակներ հնարել և պատմել, հաւատացնելով որ հրէաներն են երեխային տարել։ Ինչ դժբաղդութիւն և պատահի,—ոգէտ ժողովուրդը ամեն բանի մէջ պատրաստ է հրէաներին մեղադրել։

—

Ֆադէեվի գիրքը «Письма о современномъ положеніи Россіи», որին թոյլ տրվեցաւ մուտք Ռուսաստանի մէջ, այնքան տարածվեցաւ, որ այժմ, ինչպէս հաղորդում են լրագիրները, նորից հրատարակվեցաւ երկրորդ տպագրութեամբ։

—

Լսում ենք որ մի պարոն դիտաւորութիւն ունի թոյլատրութիւն խնդրել կառավարութենից ՇՈՒՇՈՒ մէջ մի հայերէն տմսագիր հրատարակելու։

—

ՔՈՒԹԱՅԻՍՈՒՄ սկսեց հրատարակվել մի վրացերէն նոր լրագիր «Շրօմա» (Աշխատանք) անունով։ Դա շաբաթաթերթ է և հրատարակվում է «Մշակի» դիրքով։ Մենք ստացանք վրաց նոր լրագրի առաջին համարը։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

„ՀԱՅՐԵՆԻՔ“ ԼՐԱԳՐԻ ՅՕԴՈՒԱԾԸ

—

Ինչպէս յառաջագոյն կարդացած էինք լրագրաց մէջ պ. Գրիգոր Նիկողոսեանի մի քանի հաշուական դիտողութիւններն Միացեալ ընկերութեանց վերաբերմամբ, նոյնպէս և այժմ կը կարդամք դարձեալ լրագրաց մէջ ընկերութեանց նախորդ տնօրէն Ժողովոյ մի պատասխանագիրն՝ իբր հերքում պ. Նիկողոսեանի դիտողութեանց։

Խնդիր մը՝ որ կը վերաբերի մի այնպիսի կէտի, որոյ մասին լուռ կամ անտարբեր

լինելն՝ իւրաքանչիւր ազգային անհատի համար չենք կարծեր որ այնքան համեստ կամ խոհական եղած լինի։ Խնդիր մը՝ յորմէ արտադրեալ վտանգ կամ արդիւնք կը պատկանի մեզ ամենուս, ուստի պարտականութիւն է մեզ մեր ալ կարծիքն յայտնել այդ մասին ձեր պատ. թերթի միջոցաւ։

Նախ, սա դիտողութիւնը աւելորդ չենք համարիր ընել որ, եթէ Պ. Նիկողոսեանի ըրած հաշուական յայտարարութիւններն՝ տեղական մամլոյն խօսակցութեան նիւթ չեղան, դորա պատճառը՝ ոչ թէ դոյնօրինակ մի հետաքրքրական յայտարարութեան կարևորութիւն չը տուին էր, այլ, միայն թէ այսպիսի մի փոփուկ պարագայ՝ վիճաբանութեան նիւթ լինելով մի գուցէ ընկերութիւնք վնասին, և վտանգն ընդհանուր լինի։ Սակայն երբ կը տեսնենք թէ՝ խնդիրը այնքան առաջ կը գնայ, այնքան կը յուզի ու կարծարծի որ ալ ընկերութեանց „գործն“ մինչև սատիճան մը կասկածելի դիրք կառնու, չենք ուզեր մենք ևս ձեռնծաղ դիտել այն վտանգ՝ որ Հայ գեղջուկ մանուկի յառաջդիմութեանն և նորա «լուսոյ» պատառին կը վերաբերի։ Այո՛, չենք ուզեր անտարբեր մնալ, այլ ի սրտէ կը փափաքիմք ու կուզեմք գիտակ լինել թէ՝ ո՞ւմ է իրաւունք, և ո՞ւմ ճշմարտութիւն....

Այժմ մենք, մեր խորին համոզմամբն կարևորագոյն կը տեսնենք որ յօգուտ ընկերութեան սոյն խնդիր՝ որչափ որ հնարաւոր է վաղվաղակի պարզուի, վստահելի և հաստատուն կերպով որպէս զի հասարակաց կարծիքներն վերաշինի ընկերութեանց գործունէութեան վերայ և կրկին դրաւեալ լինի առ այն հանրութեան համակրանքն ու վստահութիւն։ Ահա այս է մեր ու մերայնոց արդար համոզումներն որ բարեկամն ենք ընկերական հաստատութեան վսեմ ու սուրբ արդիւնաբերութեանց։

Մինչդեռ այն ընթացքով, որոյ կը հետևի Միացեալ ընկերութեանց նախորդ Տնօրէն ժողովն՝ յոյժ դժուարին է հասարակութեան վստահութիւնը ապահովել, զի, որովհետև, նախկին Տնօրէն ժողովոյ հերքումներն Պ. Գրիգոր Նիկողոսեանի դէմ վաւերացնելու համար, հասարակութիւնը չունի իւր առաջ մի զատ ու բոլորովին գործին մէջ շահ և կամ մասնակցութիւն չունեցող անկախ ու միանգամայն հմուտ և վերահաս քննիչ մասնախումբ, այլ, մի միայն յիշեալ Տնօրէն ժողովն է որ կը մրցի ու կը մաքառի զինքն մաքրելու համար, և որ տակաւին չէ ներկայացուցած իւր վաւերական հաշիւներն ներկայ Տնօրէն ժողովոյ։ Արդ մինչև ցարդ չը լինելով մի այնպիսի վերաքննիչ անաչառ մարմին, նոյն և իսկ ընկերութեանց շահուն համար, կատարելապէս խախուտ միջոց մ՚է ուղղակի նախկին Տնօրէն ժողովոյ բերնէն լսել իւր դէմ ուղղուած մերկացումներու հերքումն։ Իսկ նոր Տնօրէն ժողովոյ մարմինն ևս շատ փափուկ յարաբերութիւններով կապուած լինելով իւր նախորդի հետ, նա ևս կարող չը պիտի լինի հասարակաց կարծեաց առջև վստահեցուցիչ ազդեցութիւն մը ունենալ։

Ուրեմն ի՞նչպէս կարելի պիտի լինի որ համոզուի ամեն ոք թէ՝ ո՛վ է, որ կը շրջի և կը գործավարէ հասարակութեան հետ, թէ՝ ո՞րչափ ճիշդ կրնան լինել այն դիտողութիւնք որք տեղի կունենան Հայոց մեծ ընկերութեանց վերաբերութեամբ, թէ՝ ո՞վ պիտի ճշդէ այն կարծիքներն՝ որ այսօր պտոյտ կառնուն Հայ հասարակութեան մէջ։ Մեծ են տարաձայնութիւնք՝ որ ամեն ուրեք կը լսուին ու կը յեղյեղին, թէ հրապարակի և թէ մասնաւոր շրջանակաց մէջ։

Հայոց Միացեալ ընկերութեանց հսկայ վարկը վտանգուած է այսօր, որ անմիջական դարմանի կը կարօտի։ Իրաց այս վիճակին մէջ հաւատի լինելու է, որ ներկայ Տնօրէն ժողովը՝ որքան ալ ջերմեռանդ զործավարէ, դարձեալ անկարող պիտի գտնուի նա նպատակի քայլերն առաջ մղելու եթէ Ազգովին մեծ փոյթ ու խնամք չը տարուի։ Եւ առանց ժամանակ ու վայրկեան վարանելու ջանադիր լինելու կոչուսեալ վստահութիւնն՝ որ ընկերութեան առողջութեան առաջին և միակ դեղահան է, յետս առնելն դարձնելու։

Անհաճոյ տարաձայնութեանց բուն շարժառիթն եղած է, ծանօթ ու անծանօթ գումարներու՝ այս ու այն կոկորդներու ծառայելն, հասութից առաւելութեանն պէտք եղածին չափ հոգ չը տարուիլն, պատրաստ քանակութիւններն քմածին մսխուիլն, և ընկերութեան անտուկը, որոյ ոյժն ու զօրութիւնն պէտք է լինել, անխոհեմաբար շռայլելն ևայլն։

Պ. Վասիլեանի գեղագրութիւն ըսուածին համար ո՛չ թէ 25 ոսկի ըստ նախորդ Տնօրէն ժողովոյ, և ո՛չ ալ 200 ոսկի ըստ Պ. Նիկողոսեանի, այլ ոմանք կը հաստատեն թէ 250 ոսկի մսխուած է, և ոմանք ալ կրսեն թէ ընդամենը 150 ոսկի ծախք եղած է։ Նոյնպէս Պետրոս էֆէնտին Վասիլեանի ուղևորութեան համար ո՛չ 100 ոսկի ըստ Պ. Նիկողոսեանի և ո՛չ 90 ոսկի ըստ նախ. Տնօրէն ժողովոյ, այլ 200 ոսկի ընդամենը, և ոմանք ալ կը հաստատեն թէ այդ ուղևորութիւն բոլորովին ձրի, ազգասիրաբար և անձնուիրաբար եղած է։ Պ. Վասիլեանի անձնուէր ծառայութեանց ի վարձատրութիւն ո՛չ միայն 20 ոսկինոց ժամացոյց նուիրուած է ըստ Պ. Նիկողոսեանի, այլ ոմանք կրսեն թէ երկու ձեռք ալ հանդերձեղէն, նոյնպէս ո՛չ թէ Տնօրէն ժողովոյ բնակութեան վարձք յՕրթաքէօյ $10^1/_2$ ոսկի, ըստ նախորդ Տնօրէն ժողովոյ, այլ $38^1/_2$ ոսկի յատկապէս Վասիլեանի բնակութեան վարձքն է, և միանգամայն հասութից տնօրէն եղած ժամանակ իւրաքանչիւր ամիս 3 ոսկի ևս կը վճարուի։ Ուղեր դարձեալ Պ. Վասիլեանի։ Այսպէս Պ. Գ. Նիկողոսեանի յայտարարած, և նախորդ Տնօրէն ժողովոյ պատասխանած թուանշաններուն մէջ մեծ անհամաձայնութիւններ կան որ եթէ ի մօտոյ ճշմարտութիւնն չը յայտնուի մեծ է կորուստն ընկերութեան։

Հուսկ ուրեմն, Միացեալ ընկերութիւնը որոյ նպատակն մեր ամենուս կամք ըսել է, իւր այս անվստահելի դիրքէն ազատելու և վտանգն հեռացնելով մի նորոգ հիմնական ուղղութեան վերածելու համար՝ պէտք չէ որ Հայը իր սովորական անտարբերութեամբն միշտ դիտող և հանդիսատես մնայ, և խորշի անտի տղայաբար երբ քննադատութեան ենթարկուած կը տեսնէ զայն։ Սա աղեկ գիտնալու է թէ՝ քննադատութիւն կամ ամբաստանութիւն ըսուածը դատապարտութիւն ըսել չէ, այլ յայնժամ քննադատութիւնը դադարութեան կը փոխուի երբ անաչառ քննութեամբ ճշմարտութիւնը երևան կը գայ։ Այսպէս ալ Միացեալ ընկերութեանց գործող մարմինն յոյժամ կը քննադատուին, խոհեմութիւն չէ որ հասարակութիւնը անմիջապէս դատապարտէ զընկերութիւնն փակելով նորա առաջ իւր ձեռք ու զրպան, այլ, առաւելագոյն մտենալ դէպ այն տարով նորա ինչ որ պէտքն է և տուածին տէրն լինիլ, ու հետաքրքրութեամբ փնտռել թէ տեղի տրուած քննադատութիւնք, պատասխան կամ հերքումներ ո՞ր աստիճանի արդար և վստահութեան արժանի են։ Զի քննադատութեան մուտ չը դատ տեղն դիւրին չէ յուսալ ուղղութիւն։ Քննադատներն որքան ալ կծու խօսին և կծու գրեն, ուղղութեան վարժապետ պէտք է հռչակելի անուն, որոյ ձեռքերն սեղմել ու պագնել արդարութիւն և ուղղութիւն սիրողին առանձին և վեհանձն յատկանիշն է։

Վերջ վերջոյ ամփոփելով մեր բոլոր ասածներ իբր ջերմագին բարեկամ „Հայկական“ մի մեծ և արդիւնաբեր ընկերութեան կը դամ իմ առանձին կարծիքս հրապարակել այսպէս թէ, Միացեալ ընկերութեանց վարկն՝ որ շփոթեալ կը նկատի այսօր, հասարակաց կարծեացն հետ հաշտեցնելու համար պէտք անհրաժեշտ է կազմել արտաքոյ կարգի մի զօրեղ յանձնախումբ, որոյ մասնակից գտնուին ներկայ Տնօրէն ժողովն ամբողջ ընդ նախագահութեամբ Ս. Պատրիարք Հօր և կամ Նորին Բարձրաշնորհութեան կողմանէ կարգեալ փոխանորդի. ընդհ. Կրթական խորհրդական վսեմ. Մամիկոնեան էֆէնտին և կամ իւր քարտուղարն Մեծ. Իփէքճեան էֆէնտին, Պօլսոյ Ազգ. խմբագրապետաց կողմանէ մի յատուկ ներկայացուցիչ. Պ. Գրիգոր Նիկողոսեան իբր քննադատ և իբր ներկայացուցիչ մեր սիրելի Ռուսահայ եղբարց որոնք այնքան նպաստեցին ու պիտի նպաստեն ընկերութեան գործին, և նախորդ Տնօրէն ժողովն որոյ վերայ կը ծանրանան ամեն պատասխանատուութիւնք։ Ահա այս վստահելի եղանակաւ քննել ընկերութեանց նախորդ և ներկայ գործառնութիւնք և այնու յայտարարել իրաւն և ճշմարիտն ի վերաշինութիւն մատց շփոթելոց։

Յարութիւն Ց. Զաքարեան

ԱՆԳԼԻԱ

Անգլիական պարլամենտի վերջին շրջանի ժամանակ ընդունվեցաւ մի նոր տպագրական օրէնք, որ բաւական թեթևացնում է հրատարակողների և խմբագիրների պատասխանատուութիւնը դատաստանական իշխանութեան առաջ։ Մինչև այժմ հրատարակողը, խմբագիրը և մինչև անգամ տպարանատէրը պատասխանատու էին այն բոլոր հաղորդութիւնների համար, որոնք տպվում էին լրագրի մէջ։ Օրինակ երբ տպվում էին հաշիւներ հասարակական ժողովների մասին, իւրաքանչիւր անվայել բառ կամ նախադասութիւն հրատարակելու համար, որ գործ էր դրել ժողովի մէջ ճառախօսներից մէկը, խմբագիրը կամ հրատարակողը ենթարկվում էր դատարանին։ Այժմ ընդունված տպագրական նոր օրէնքը, որին լորդերի ժողովի անդամներից շատերը ընդդէմ էին, վերջ դրեց այդ անբնական դրութեանը։ Այսուհետև զանազանութիւն չի լինի դատաստանական զորձերի, պարլամենտական նիստերի և հասարակական ժողովների հաշիւների տպագրութեան ժամանակ։ Նոր օրէնքի մէջ որոշ ասված է, որ հասարակական ժողովների ժամանակ արտասանած ճառերի իսկական տպագրութեան համար մամուլը ոչ մի պատասխանատուութեան չէ ենթարկվում։ Եթէ հասարակական ժողովի մէջ արտասանած ճառը բովանդակում է որ և է վիրաւորանք մասնաւոր անձի պատուի համար այդ ճառի տպագրութիւնը պասկվիլ չի համարվի, ինչպէս լինում էր մինչև այժմ։ Մի և նոյն օրէնքի մի այլ յօդուածի համեմատ պասկվիլի կամ անձնաւորութեան պատուի համար վիրաւորեցուցիչ յօդուածի տպագրութեան համար լրագիրը կարող է դատաստանի ենթարկվել, եթէ այդ թոյլ կը տայ Անգլիայի մէջ պրօկուրօրը, իսկ Իրլանդիայի մէջ գլխաւոր փաստաբանը։ Այդ օրէնքը բաւական փոփոխում է մամուլի դրութիւնը և վերջ է դնում մասնաւոր անձանց գանգատներին, որոնք շատ անգամ դիմում էին դատարանին շահասէր նպատակներով։

ՖՐԱՆՍԻԱ

Վերջին ցոյցերը ի պատիւ Գամբետտայի Փարիզի ամերային ցիրկի մէջ, մանաւանդ Գամբետտայի և Պօլ Բերի ճառերը սաստիկ տպաւորութիւն գործեցին պահպանողական շրջանների մէջ և մի տեսակ սարսափ տարածեցին, որովհետև Գամբետտա բացարձակ յայտնեց, որ դէմոկրատիայի նպատակը պէտք է լինի կատարելապէս ոչնչացնել կրօնի դատաւորութիւնը ժողովրդական կրթութեան գործի մէջ։ Պօլ Բերի ճառը աւելի էլ նշանակութիւն ունեցաւ այն պատճառով, որ նրան համարում են ժողովրդական լուսաւորութեան ապագայ մինիստր։ Պօլ Բեր ամերային ցիրկի մէջ եղած ժողովի առաջ արտասանեց 'ի միջի այլոց հետևեալը։ „Այս դահլիճի մէջ կատարվող համակրական ցոյցերը վերաբերվում են մեծ քաղաքացի Գամբետտային, որ Ֆրանսիայի դժբաղդութեան ժամանակ փորձեց ազատել նրա պատիւը և որ վերջը ազատեց հանրապետութիւնը նրան սպառնացող դաւադրութենից։ Փարիզի բոլոր շրջաններից այստեղ հաւաքված ընտրողները պէտք է վրէժխնդիր լինեն Գամբետտային պատճառած վիրաւորանքի համար, որ տխրեցրեց բոլոր Ֆրանսիացիներին և որ ուրախացրեց Տիբրոս և Հռենոս գետերի այն կողմը“։ Այնուհետև Պօլ Բեր, դատախօսելով „կրօնի և ուսումնարանի մասին“, վերջացրեց իր ելեֆերատը քրիստոնէական վարդապետութեան հրահանգներից և կաթոլիկ կրօնական դասագրքերից օրինակներ բերելով, որոնք ներկայ եղողներին ծիծաղ էին պատճառում կամ առիթ էին տալիս վրդովված բացականչութիւններին։

Հաւատացնում են, որ Ֆրանսիական արտաքին գործերի մինիստր Բարաելեմի Սենտ-Իլեր մտադիր չէ սպասել նոր մինիստրութեան կազմվելուն, այլ կամենում է հիմիկուց հրաժարական տալ։

Անգլիական արտաքին գործերի մինիստրի օգնական սեր Զարլզ Դիլկ մտադիր է այցելել Փարիզ, որտեղ նա կամենում է տեսնվել մի քանի քաղաքական մարդկերանց հետ, որոնց թւում և Գամբետտայի հետ։ Վերջինը պատգամաւոր ընտրվելուց յետոյ 11,000 շնորհաւորական հեռագիրներ ստացաւ։

Բամպանի ծոմի վերջանալուց յետոյ տպստամբութիւնը Տունիսի և Ալժիրիայի մէջ սկսեց նորից տարածվել։ Համմամիտա նաւահանգստից ոչ հեռու, բէյի մայրաքաղաքի մօտ արիւնհեղ կռիւ պատահեցաւ Ֆրանսիական զօրքերի և ապստամբ արաբների մէջ, որոնք յետ մղվեցան։ Թէպէտ Ֆրանսիական զօրքերը յաղթեցին, բայց այնուամենայնիւ այդ կռիւը ապացուցեց, որ անկարելի է յոյս դնել Տունիսի և Ալժիրիայի խաղաղեցնելու գործի վրա։ «Temps» լրագրին հաղորդում են, որ այդ կռիւը չափազանց արիւնահեղ է եղած։ Արաբները կատաղութեամբ յարձակվում էին Ֆրանսիական զօրքերի վրա, մինչև վերջին-

ների թնդանօթները գրեթէ ոչնչացրին հակառակորդներին։ Ֆրանսիացիների խօսքերի համեմատ այդ կուրին 15,000 արաբներ էին մասնակցում։

Ալժիրիայի մէջն էլ գործերը շատ վատ ուղղութիւն են ստանում։ Գնդապետ Նեգրիէի անզգոյշ հրամանը ֆրանսիական զօրքերին արաբների Սիդի-Շէյխ սուրբի գերեզմանը քանդելու մասին, որ արաբների հաւաքվելու կենտրոնատեղին էր, վերջինների ֆանատիկոսութիւնը վերին աստիճանի հասցրեց։ Իրան արդարացնելու համար Նեգրիէ հաւատացնում է, որ նա հրամայել է արաբների սուրբի նշխարները ժերիվելի մզկիթը տեղափոխել։ Բայց արաբները, որոնք իրանց համար մի այլ կենտրօնատեղի են գտել, սաստկացնում են միմեանց ֆանատիկոսութիւնը, պախարակելով ֆրանսիացիների սրբապղծութիւնը և հաւատացնելով, որ նրանք արաբների սուրբին գերի են վերցրել։ Ֆրանսիական գլխաւոր շտաբի մէջ նշանաւոր պատրաստութիւններ են կատարվում աշնանային արշաւանքի համար։

ԲՈԼԳԱՐԻԱ

Սօֆիայից գերմանական լրագիրներին հաղորդում են հետևեալը։ Բոլոր նահանգներից ստացված տեղեկութիւնների համեմատ ազգաբնակութիւնը հրաժարվում է հարկեր վճարելուց, և այդպիսով կառավարութեան դրութիւնը հետզհետէ վատանում է։ Տիրնովոյի նահանգում կառավարութիւնը կատարելապէս կորցրել է իր հեղինակութիւնը. ոչ քաղաքացիք և ոչ գիւղացիք չեն կամենում հարկեր վճարել։ Հարկ հաւաքողներին ծեծում են և դուրս են անում, իսկ ժողովուրդը բացարձակ յայտնում է, որ նա չէ ճանաչում այժմեան կառավարութեանը, հետևապէս որ այդ կառավարութիւնը հարկեր հաւաքելու իրաւունք չունի։ Մի և նոյն տեսակ լուրեր ստացվում են Ռուշչուկի և Սիլիստրիայի նահանգներից։ Բազգրադի, Բասովյի և Նիկոպոլի մէջ անկարգութիւններ են պատահել։ Վակարելի մէջ գիւղացիք յարձակվեցան իրանց գիւղի մօտ գտնված երկու մաքսատունների վրա, կարծելով, որ նրանք հարկեր հաւաքելու համար են հիմնված, սատիկ ծեծեցին մաքսային ասիճանաւորին և կողոպտեցին գանձարանը։ Այդ մաքսատունները Արևելեան-Ռումելիային են պատկանում և այդ պատճառով հարց կը ծագի սահմանը խանգարելու մասին։ Ալէքսօ-փաշա անկասկած բաւականութիւն կը պահանջէ բոլգարական կառավարութենից։ Ներքին գործերի մինիստր գնդապետ Ռեմլինգեն մինչև այժմ չէ համարձակվում դիմել զինաւորված ոյժին անկարգութիւնները ճնշելու համար, որպէս զի իշխան Ալէքսանդրի դրութիւնը աւելի անտանելի չը դարձնէ։ Իշխան Ալէքսանդր արդէն թոյլ է տուել խիստ միջոցների դիմել և երևի Բոլգարիայի մէջ շուտով արիւնհեղութիւն կը սկսվի։ Այդպիսով բոլգարական նոր զօրքերը, որ այդքան շատ ծախս են նստել, իրանց ոյժը ամենից առաջ իրանց հայրենիքի մէջ կը փորձեն։ Ասում են, որ իշխան Ալէքսանդր մտադիր է առանց ընդունված կանոնին հետևելու բարձր ասիճաններ տալ այն օֆիցերներին, որոնք կարգ էին պահպանում վերջին ընտրութիւնների ժամանակ և ստիպում էին ընտրողներին ձայն տալ յօգուտ իշխանի կողմնակից պատգամաւորների։ Միս օֆիցերները կը սկսեն հրաժարվել իրանց պաշտօններից, հէնց որ այդ մտադրութիւնը կիրագործվի։ Պրոֆէսսոր Դրինով, որին սպասում էին այստեղ պետական խորհուրդը կազմակերպելու համար, հրաժարվեցաւ այդ գործը կատարելուց և, ինչպէս ասում են, նա կերթայ Արևելեան-Ռումելիա, որտեղ նա նոյնչափ հեղինակութիւն ունի, որքան Բոլգարիայի մէջ։ Տարաբաղդաբար բոլգարական կառավարութեան համար բոլոր օրինաւոր մարդիկ հրաժարվում են նրա յետադիմական քաղաքականութեանը մասնակցելուց, այլ միայն անընդունակ և բաղդախնդիր մարդիկ առաջարկում են նրան իրանց ծառայութիւնները։

ԱՄԵՐԻԿԱ

Նախագահ Գարֆիլդի առողջութիւնը հետզհետէ լաւանում է։ Նրա մտաւոր ընդունակութիւնները շատ լաւ են։ Մի անգամ միայն կերակուր ընդունելու ժամանակ նախագահը ասաց. „արդեօք էլի շատ կայարաններ պէտք է անցնեմ։“ Նրա թոքերը քննված են և կատարելապէս առողջ են յայտնված։ Հիւանդութեան ճգնաժամը դեռ չէ անցել, բայց նշանները լաւ են։ Գարֆիլդ իր սեփական ձեռքով գրեց իր մօրը հեռաւոր նամակը։ „Մի հաւատա լրագիրների հաղորդած հակասող լուրերին իմ առողջութեան մասին։ Ես թեպէտ շատ թոյլ եմ և պառկած անկողնի մէջ, բայց կամաց կամաց լաւանում եմ։ Ժամանակի և համբերութեան օգնութեամբ ես դեռ կարող եմ առողջանալ։ Ողջունիր բոլոր ծանօթներիս և բարեկամներիս, մանաւանդ քոյրերիս։“

Մինիստրների խորհուրդը քննեց այն հարցը, թէ արդեօք հարկաւոր չէ հրաւիրել փոխ-նախագահ Արչերին գոնէ մի քանի ամիս վարել նախագահի պաշտօնը, մինչև Գարֆիլդ առողջանայ։ Դեռ ևս վճիռ չէ կայացրած։

Վաշինգտօնից օգոստոսի 25-ից հեռագրում են, որ այդ օրը առաւօտեան 6¼ ժամին Գարֆիլդը երկաթուղով ուղևորվեցաւ Բալտիմօրա, որտեղ հասաւ առաւօտեան 8 ժամին։

ՅՈՒՆԱՍՏԱՆ

Սեպտեմբերի 1-ին առաւօտը յունական զօրքերը մտան Կարդիցա։ Բոլոր դաւանութիւններին պատկանող բնակիչները առանց բացառութեան ընդունեցին զօրքերին աղաղակներով ի պատիւ յունական թագաւորի և զօրքերի։ Կարգապահութիւնը բոլորովին չէ խանգարվել։ Կրիտ կղզու վրա անկարգութիւններ սկսվեցան, որոնց առիթ տուին Թիւրքաց նահանգապետի թշնամական յարաբերութիւնները բնակիչների հետ։ Կրիտի ազգաբնակութիւնը հրաժարվում է ընդունել իր համար նշանակված եպիսկոպոսին և մտադիր է նրան արտաքսել։ Միզօպոտամասի և Այվազիլի մէջ 2000 մարդ զինաւորվել են։ Թիւրքաց գլխաւոր նահանգապետը բոլորովին չունի բարոյական հեղինակութիւն։

Ջիջած երկիրները զբաւելուց յետոյ յունական կառավարութիւնը մտադիր է անյապաղ զբաղվել աւազակութիւնները ոչնչացնելով։ Աւազակների դէմ մի քանի զօրաբաժիններ կուղարկվեն։ Նորերումս ալբանական փախստական զինուորներից կազմված աւազակների մի խումբ Կաստանիայի մէջ 19 մարդ գերի վերցրեց։ Նրանցից երեքը սպանված են, մնացածներից մի քանիսը ազատված են 140,000 ֆրանկ վճարելուց յետոյ, իսկ միւսները գերի կը մնան, մինչև նրանց ազատելու համար 243,000 ֆրանկ չը տան։

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ

Բէրլին 5/9. 81.

Ամառվայ ամիսները սովորաբար անուանվում են Բերլինի բարբառով Sauergurkenzeit (թթված խիարների ժամանակը) այն քաղաքական հանդարտութեան պատճառով, որ տիրում է այդ միջոցին։ Բայց այս տարի իսկ ամառվայ ամիսներն էլ, որոնք փոխանակ հանգստացնելու հասարակութիւնը, բերեցին իրանց հետ սաստիկ զրդռիչ յուզմունք բայիստագի դալու ընտրութիւնների պատճառով։ Ինչպէս նորերս Reichs-Anzeiger յայտնեց, 27-ն հոկտեմբերի նշանակված է կառավարութիւնից իբրև այն օրը, որ նուիրված պիտի լինի ընտրութիւններին։ Այս անգամ մրցութիւնը սաստիկ լինելու է անկասկած այնքան բազմաթիւ պատճառներից, որ անցեալները չը կայն և որոնք առիթ եղան աւելի թշնամական վարմունքի զանազան կուսակցութիւնների իրար դէմ։ Անթիւ մինչև այժմ չեղած կուսակցութիւններ կազմվում են և աշխատում են նշանակութիւն ստանալ։ Առաջվայ պահպանողական, ազատամիտ-պահպանողական, ազգային-ազատամիտ, առաջադէմ, սոցիալ-դէմոկրատ, կենտրօնական (կղերական կաթոլիկ) կուսակցութիւններին աւելացան նոր ֆրակցիաներ։ Մինչև որ քրիստոնեայ-սոցիալ, հակառաջադէմ, հակասեմիտական կուսակցութիւնները իրանց ոյժերը պիտի պահպանողական կամ յետադիմական քաղաքականութեան նուիրեն, ազատամիտ կուսակցութեան մէջ ազգային-ազատամիտներից անջատվեցաւ ձախ թեը, որ իր ձգտումներով առաւել մօտենում է առաջադէմ կուսակցութեանը։

Կառավարութեան, կամ որ նոյն է իշխան Բիսմարկի յետադիմական հակումները, նրա փորձերը հաշտվելու կենտրօնի կուսակցութեան և ուրեմն Վատիկանի հետ, նրա ազդեցութեան չնորհով աւելի և աւելի ընդարձակութիւն ստացող բացառական օրէնքը սոցիալ-դէմոկրատների դէմ, որոնք շուտով մի քաղաք չեն ունենայ Գերմանիայում, ուր կարող կը լինեն պատսպարվել, նրա ջանքերը ժողովուրդը ձգել իր կողմը և կազմել մի կառավարչական-սոցիալ կուսակցութիւն, որ ոչխարային հնազանդութեամբ կը հետևի նրա կամայական քաղաքականութեանը— այդ բոլորը հասկանալի վրդովմունք գցեց այն մարդիկների մէջ, որոնց համար ազատութիւնը լոկ խօսք չէ, այլ որոնց թանդ է թէ անհատական, թէ խօսքի և մտքի ազատութեան իրաւունքը, որոնք սովոր չեն վայելել մի Բիսմարկի կամայականութիւնից թոյլ տուած ազատութիւնը միայն և նրա կամքի ստրուկներ լինել։

Դեռ երբէք այնքան յուզված չէին ազատամիտները, մանաւանդ որ նրանց հակառակորդներն էլ ոչ միջոցներ, ներելի թէ աններելի, ոչ իրանց ազդեցութիւնը չեն խնայում, որ ստորացնեն թէ ժողովրդի, թէ կառավարութեան աչքումը ամեն ազատ և անկախ միտք, նրանց արտայանողներին և պաշտպաններին դաւաճան ազգի և պետութեան անուանելով։ Ճշմարիտ է, կան դրանց թեում և դաւաճաններ, բայց նրանք միայն արժանի են այդ անուան, որոնք թողնելով ազատութեան դրօշակը, անցան հակառակորդների բանակը, իրանց ոյժերը նուիրելով խաւար ռեակցիային և պաշտպան հանդիսանալով հզօր կանցլերի կամայական քաղաքականութեան։— Բայց ազատամիտների բողոքը երևի ապարդիւն կը լինի՝ նրանք բազմութեամբ կընտրվեն միայն մեծ քաղաքների մէջ և գուցէ Գերմանիայի հարաւը նոյնպէս կը բազմացնի նրանց ներկայացուցիչների թիւը։ Ռէակցիան առժամանակ գրկախառնեց երկիրը և բոլոր յետադէմ և կղերական կուսակցութիւնները կը միանան որ վճռողական հարուած տան ժողովրդի ազատութեանը։ Այնու ամենայնիւ առաջադէմները չեն յուսահատվում և իրանց ձեռքին եղած միջոցները չեն խնայում, որ ընդդիմադրեն ճնշման։ Նրանք հասկանում են որ բացառական օրէնքները կը դառնան Բիսմարկի ձեռքում մի միջոց, որ կը չէզոքացնի և երևակայական կը դարձնի ժողովրդի ներկայացութեան և ինքնավարութեան իրաւունքը։

Այդ միջոցին ռեակցիան ամեն տեղ քարոզում է պատերազմ ազատամիտների դէմ և չողոքորթում է ստոր ժողովրդի անազնիւ հակումներին զրդռելով նրան շարունակ դէպի հալածումներ հրէաների դէմ։ Արդէն գրեթէ անուղղելի են այն խայտառակ անցքերը որ արիւնով և ամօթով ծածկեցին Պրուսիայի հողը, որ դեռ մի դար առաջ ապաստան էր կազմում իրանց դաւանութեան պատճառով հալածվածների համար։ Եւ մի կրօնաւոր, որի վրա գլխաւոր պատասխանատուութիւն ընկնում է այս ամօթալի անցքերի առիթով, այժմ ձեռքերը երկինք բարձրացնելով և աչքերը ծռմռելով հաւատացնում է, թէ նա չէր ցանկացել, որ արիւն հոսի, որ բռնաբարվի անհատական իրաւունքը և այլն։ Դա ուշ է այժմ և եթէ սերմերը որ ընկել են համբերող գերմանական հողի վրա կարողացել են մոլեռանդութեան այսպիսի տգեղ և հրէշաւոր բոյսեր արդիւնաբերել տասնեիններորդ դարու վերջում, դա չնորհով ազգի այն կեղծաւորների, բարերարների և բարեկամների է եղել, որոնց սնունները միայն զզվանքով պիտի յիշվեն, որովհետև նրանք կարողացել են յարուցանել այժմ միջին դարերի խաւարը և անհամբերողութիւնը։ Այս բոլոր անցքերը տեսնելով չը պիտի արդեօք կասկածի մարդ որ կայ առաջադիմութիւն. պիտի չարունակի հաւատալ արդեօք որ անցեալը անցած է և այլ ևս չը պիտի նորից յարութիւն առնի հնացած միջնադարեան աւերակներից, որոնց վրա կառուցվեցաւ նոր քաղաքակրթութեան շէնքը։

Հակասեմիտական շարժման գլխաւորներից մինը, պրոֆէսսոր Տրայչկէ աւելի ազնիւ վարվեցաւ քան թէ նրա կուսակից քարոզիչ Շտէօկկէր։ Նա նորերումս իբրև ներկայացուցիչ առաջարկվեցաւ Կրօյցնախ քաղաքի մէջ, բայց նրան պաշտպանող կոմիտէտը չը կարողացաւ նրա համար ձայների բաւական մեծ բազմութիւն հաւաքել և ահա պ. Տրայչկէ իրան յատուկ գիւցազնական անկեղծութեամբ յայտնեց, որ նա այնուհետև չէ կարող իր վրա պաշտօն ընդունել ազատամիտ ներկայացուցչի բայիստագի մէջ և հրապարակապէս յայտնում է իր ելքը ազատամիտ կուսակցութիւնից։ Այդ հազիւ թէ հարկաւոր էր յայտնել, որովհետև պարոնի հակազատական վարմունքներից յետոյ և իշխան բայիսկանցլերի քաղաքականութեան կատարեալ անպայման ենթարկվելուց յետոյ, հազիւ թէ կը գտնվեր մի մարդ, որ դեռ կասկածի մէջ կը լիներ թէ ինչ կուսակցութեան է պատկանում այդ ամբիծնական ազիտատորը։ Հակասեմիտները կարող են և մի երկրորդ յայտնի համալսարանական ոյժ իրանցը համարել՝ պրոֆէսսոր Ադոլֆ Վագնէր յայտնի քաղաքական տնտես Բէրլինում իրան առաջարկելով իբրև ներկայացուցիչ պարլամենտի համար, ընտրողական մի ժողովի մէջ, նմանապէս չեշտեց իր կատարեալ համակրութիւն իշխան կանցլերի ցանկացած նոր օրէնքների վերաբերութեամբ։ Պետական պաշտպանութիւն հիւանդ և անկարող աշխատաւորների, ծխախոտի մենավաճառութիւնը, պահպանիչ հարկեր օտար արդիւնքների վրա և այլն, նրա պրոգրամի գլխաւոր կէտերն են։ Պ. Վագնէր մինչև անգամ մի նոր միջոց է առաջարկում Գերմանիայի բարօրութիւնը բարձրացնելու և դաղթականութիւնը Գերմանիայից նուազեցնելու համար՝—նուազեցնելով ծնունդների թիւը, կամ ֆրանսիական «երկու որդիների» սիստեմը ընդունելով.... Մի լրագիր արտատպելով պարոնի այդ փրկիչ առաջարկութիւնը աւելացնում է՝ «օրքան մեզ յայտնի է պ. Վագնէր ութ հատ որդի ունի։»

Թող ժամանակաւոր յաղթութիւն լինի բոլոր խաւար կուսակցութիւնների,—նրանց ձեռքը չը պիտի մնայ երկիրը. թող փորձի Գերմանիան ինչ է նշանակում իշխան Բիսմարկի և նրա սարկային կուսակիցների կառավարութիւնը և այն ժամանակ նա կը յայտնի և իր ցանկութիւնները։

Ասում են իբր թէ իշխանը յայտնել է թէ նա բայիստագը պիտի արձակի և նոր ընտրութիւնների պիտի դիմել տայ, եթէ բազմութիւնը հակառակ կը հանդիսանայ նրա բարերար ռէֆորմներին և մէկը միւսից յետոյ կարձակվեն և նոր ընտրված բայիստագները, մինչև որ չընդունվեն նրա առաջարկված օրէնքները։ Դա վտանգաւոր մի փորձ է և չը լինի թէ իշխանը այս անգամ սխալվի, կարծելով որ Գերմանիան միայն մի բանին է ձգտում,—նրա կամքին հպատակվել։

Անդրէաս Արծրունի

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 սեպտեմբերի։ „Правит. Вѣст.“ լրագիրը հաղորդում է. Օգոստոսի 30-ին տուած բարձրագոյն հրովարտակով սրբազան Իոանիկիին շնորհված է Ալէքսանդր Նեվսկու շքանշանը։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ 25% ԷԺԱՆ քան թէ ուրիշ տեղ. ԹԷՅ, կակաօ, ՇՕԿՕԼԱԴ, բիսկվիտներ, մուրաբաներ, բրինձ, ամաններ, բաժակներ, բօկալներ, թէյամաններ, սուփօկներ, ՄԱՏՈՒՑԱՐԱՆՆԵՐ, երես լուանալու ամաններ, ԿՈՂՊԷՔՆԵՐ, ՁԳԵՍՏԱԿԱԽՆԵՐ, գդալներ, դանակներ, ԳՐԻՉՆԵՐ, թուղթ, ծրարներ, տետրակներ, մատիտներ, ՀՐԱՑԱՆՆԵՐ, ՌԷՎՕԼՎԵՐՆԵՐ, մէջքակալներ, կլեօնկա, ԹԱՄԲԵՐ, սանձեր, ուլթօներ, ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ, երեսրբիչներ, թաշկինակներ, կանանց գուլպաներ, մարդկերանց գուլպաներ, տուալետի սապօն, հոտաւէտ ջրեր, շերբետ, ցիտրան մագնեզիա, խինայի գինի, պօրտվէյն, խերես, կօնյակ և 1,000 այլ առարկաներ: **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ: ՆՈՅՆ ՏԵՂԸ** վաճառականներին **ՄԵԾ** քանակութեամբ ծախվում է **ԹԷՅ**. պուդերով 40, 46, 52, 58, ր., իսկ ֆունտերով 1 ր. 1 ր. 10 կ., 1 ր. 20 կ., 1 ր. 40 կ., 1 ր. 60 կ. և 1 ր. 80 կ., իսկ ամենաբարձր թէյը ֆունտը 2 ր. քաշը ԱՌԱՆՑ ԹՂԹԻ:

ՀՐԱՑԱՆՆԵՐ 20—60 ր. և ՉՕԿ-ԲՕՐ (chokl bore) George Dau-ի գործարանից 120 ր., ռէվօլվերներ 4—34 ր., ԲՈՒԼԴՕԳ (bull dog) 11—20 ր., կանանց թամբեր 65 ր., շեֆիլդի դանակներ 3 ր. 50 կ. գիւժինը, ալբօմներ կխադնով, ֆլյոտաներ և այլն: Ամենամեծ պահեստ հրացանների և ռէվօլվերների Թիֆլիսում:

6—100

ՁԱՅՆԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԱՍԱՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ՏԷՐ-ԵԶՆԻԿԻ աշխատասիրութեամբ հետեւեալ ձեռնարկները վաճառվում են բացառապէս «Կովկասեան» Ջաքար. Գրիգորեանի գրավաճառանոցում.

1) Դասագիրք հայկ. ձայնագրութեան . 30 կ.
2) Մանկական ձայնագրեալ երգարան . 40 կ.
3) Մանկական երգարան առանց ձայնագրութեան . . . . 20 կ.
4) Խմբական երգեր ձայնագրեալ քառաձայն. . . . . 50 կ.

Գումարով առնողներին զիջումն կը լինի:

5—10

144 Արծրունու գալերեա 144
ամենաէժան պահեստ
մերէլի և հայելիների:

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՑԻՉ անունով **ՄԵՐ ԵՐՐՈՐԴ ՏԱՐՈՒԱՑ** դասագիրքը լոյս տեսաւ և ծախվում է Կովկասեան ու Կենտրոնական գրավաճառանոցներում:

Գինն է 40 կօպէկ:

Իսկ ով ցանկանում է հատը 35 կոպէկով ձեռք բերել, գինը ԿԱՆԽԻԿ վճարելով և ճանապարհածախսը իր վրա առնելով

Թող գիմէ մեզ հետեւեալ հասցէով.

„Въ Тифлисъ.— На Авлабарѣ. Ивану Петровичу Назарьянцъ.“

Պատիւ ունիմ յայտնել, որ լինելով այստեղ Բաքու, ընդունում եմ ամեն տեսակ կօմիսիական յանձնարարութիւններ կատարել:

Ցանկացող պարոններին խնդրում ենք դիմել մեզ:

ВЪ БАКУ
Въ конторѣ братьевъ Бегляровыхъ
Абѣлю Давидовичу Апрѣсянцу.
կօմիսիօներ—Աբէլ Ապրեսեանց

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ 30% ԷԺԱՆ ՔԱՆ ԹԷ ՈՒՐԻՇ ՏԵՂ. մուրաբաներ, կօնֆէկտներ, ԿԱԿԱՕ, բրինձ, ԱՄԱՆԵՂԷՆ, բօկալներ, թասեր, երես լուանալու ամաններ, չայնիկներ, ԲԱԺԱԿՆԵՐ, կերակրի ամաններ (судки), մատուցարաններ, ԿՈՂՊԷՔՆԵՐ, ԴԱՆԱԿՆԵՐ, գդալներ, ԳՐԻՉՆԵՐ, թուղթ, մատիտներ, տետրակներ, ՀՐԱՑԱՆՆԵՐ, ՌԷՎՕԼՎԵՐՆԵՐ, ալբօմներ, ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ, ՀԱԳՈՒՍՏ, տրիկօ, պարուսին, թաշկինակներ, երեսրբիչներ, կլեօնկա, գուլպաներ, ԹԱՄԲԵՐ, ՊՕՐՏ-ՎԷՅՆ, խերես, կօնեակ և այլն: ԹԷՅ մեծ քանակութեամբ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ համար ՊՈՒԴԸ 44 ր., 46 ր., 48 ր., 50 ր., 52 ր., 54 ր., և այլն: Այդ բոլորը կարելի է գտնել **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ:**

Մի և նոյն տեղը էժան գնով. ՇԷՐԲԵՏ մագնեզիա, խմոր ԾԱՐԱԻԻ դէմ, ԽԻՆԱՑԻ գինի ջերմի դէմ, կարբօլեան ՓՕՇԻ, հեղուկ և ՍԱՊՕՆ, բժշկական թուղթ վատերկլօզետի համար, պարսկական փոշի: 60—100

ՏՆԱՅԻՆ ԴԱՍԵՐՈՎ

Ցանկանում է պարապել Ներսիսեան դպրոցից աւարտած մի փորձուած և հմուտ ուսուցիչ ԱՄԵՆԱՉԱՓԱՒՈՐ ԱՄՍԱԿԱՆՈՎ:

Ցանկացողներին խնդրում է հասցէն թողնել պ. Շահվերդեանի պավիլիօնում կամ „Մշակի“ խմբագրատանը:

1—5

ՏԷՐ-ՑԵԿՈՐԵԱՆՑԻ և **ՄԱՆԱՍՏԻՐՑՕՎԻ** ուսումնարանը, որ այժմ անցնում է **ՎԱՐԺԱՊԵՏԱՑ ՁԵՌՔԸ**, ուսումն կը սկսի սեպտեմբերի 4-ին: Ուսուցիչքն մեծամասամբ լինելու են մի և նոյն անձինքն և **ՏԷՐ-ՑԵԿՈՐԵԱՆՑԸ** կը մնայ կառավարիչ ուսումնարանի բուն ուսումնական մասին:

3—3

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
„ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՎԸ ԵՒ ԷՋՄԻԱԾԻՆԸ“

Վերնագրով գրքոյկը, էջմիածնի և սովատանջների վիմագրական պատկերով: Թիֆլիսում ծախվում է կենտրոնական գրավաճառանոցում, իւրաքանչիւրը 30 կոպէկով: Օտարաքաղաքացիք 10-ից ոչ պակաս ցանկացողները առանց փոստայի ծախքը հոգալու, կարող են դիմել Մնացական Բեգլարեանցին հետեւեալ հասցէով. Въ Тифлисъ, Верхняя Таможенная улица, № 31, Мнацакану Бегларьянцу.

4—10

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ ՀԵՏԵՒԵԱԼ ՀԱՅԵՐԷՆ ԴԱՍԱԳՐՔԵՐԸ՝

1	Տէր-Ղեւոնդեան՝ Մայր. լեզու մ. ա.	„	35 կ.
2	— — — — — — մ. բ.	„	40 „
3	— — — — — — մ. գ.	„	70 „
4	Ս. Մանդինեանց՝ Նահապետական և հայր. աշխարհ.	„	65 „
5	— — — — Դիւցազնական աշխարհ.	„	30 „
6	— — — — Ընտանեկան աշխարհ	„	25 „
7	Կոստանեանց՝ Ծաղկաքաղ արձակ և չափածոյ բանից.	„	25 „
8	— — — — — երկրորդ շրջան.	„	60 „
9	— — — — — երրորդ շրջան.	„	40 „
10	Աղայեանց՝ Ուսումն մայր. լեզուի ա. տ.	„	15 „
11	Նազարեանց՝ Ուսուցիչ՝ Հայոց լեզուի գ. տարի	„	40 „
12	— — — — — — չորր. տարի	„	60 „
13	Այվազեանց՝ Նախակրթանք գրաբ. լեզուի մ. ա.	„	40 „
14	— — — — — — մասն երկր.	„	45 „
15	— — — — — — մասն երր.	„	50 „
16	Եղիշէ՝ պատմութիւն Վարդանանց	80 կ. և 1	— „
17	Եզնիկ՝ Եղծ աղանդոց.	1	— „
18	Բագրատունի՝ Տարերք քերականութեան.	1	25 „
19	Պալասան՝ քերականութիւն աշխ. լեզուի.	„	50 „
20	Բաղաթեանց՝ քերակ. աշխ. լեզուի.	„	25 „
21	Տէր-Ստեփանոսեանց՝ Սկզբունք քրիս. հաւատ.	„	50 „
22	Պօպովեան՝ Սրբազան պատ. հին կտակարանի.	„	60 „
23	— — — — — — նոր կտակարանի.	„	60 „
24	Հէնչել՝ Թուաբանական խնդ. ժողովածու (Ս. Մանդ.)	„	40 „
25	Վարժապետեան՝ Դասագիրք թուաբանութեան.	„	70 „
26	Русское слово Տէր-Դաւթեանի.	„	45 „
	Ամենատեսակ ռուսերէն լեզուի ձեռնարկներ:		
27	Սիմոնեանց Ն. Ընդհ. աշխարհագրութեան նախագիծ.		35
28	— — — — — նոյն մասն ուսումնական	„	60 „
29	— — — — — նոյն մասն քաղաքական	„	60 „

Նոյն տեղը վաճառվում են նաև այն գործածական դասագրքերը, որոնք այս յայտարարութեան մէջ չեն յիշատակված: Բացի սորանից՝ կենտրոնական գրավաճառանոցին կից բացուած է նաև ուսումնարանապատկան և կանցելարիական ամենատեսակ իրեղէնների առանձին բաժանմունք: Գաւառական ուսումնարանների պահանջները կատարվում են առանց յետաձգութեան: Գումարով գնողներին նշանաւոր զիջումն է լինում: Անփող պատուէրներն անկատար են մնում:

Արդէն պատրաստ ունեմ 25 հատ ձայնագրած հայկական երգեր դաշնամուրի համար: Այդ երգերը ի լոյս ընծայելու համար ես ստորագրութիւն եմ բացել՝ տպագրութեան ծախքը մասամբ թեթեւացնելու համար: Այժմէն ստորագրվողների համար իւրաքանչիւր օրինակի գինը լինելու է 1 ր. 60 կ., իսկ տպագրվելուց յետոյ գինը կը լինի 2 ր.: Իւրաքանչիւր 5 օրինակ ստորագրվողը կը ստանայ 6 օրինակ:

Ահա տպագրվելու ձայնագրած երգերի անունները:

1. Այ մարդ այսօր... 2. Ախապիշ անձայն... 3. Արիք որ երթամք... 4. Ագնիւ ընկեր... 5. Արիք Հայկազունք... 6. Արփացիր գոնեա... 7. Բաժակներ առնունք... 8. Գիշեր ցերեկ... 9. Երբ որ բացուին գոներ... 10. Եղբարք մի շուրջ... 11. Զինուորիս երգեր... 12. Էր հեռանաս... 13. Թէ ծխաքարշը ձեռքիս... 14. Ինչ սիրուն ես... 15. Իմ սիրտս աղ ես... 16. Իմ սիրելի զաւակունքս... 17. Խնդա այսօր... 18. Կատր կատր... 19. Կապոյտ երկինքում... 20. Հայրենիք սրբազան.. 21. Հայոց աղջիկներ... 22. Մեր հայրենիք... 23. Մեր կեանքի նման... 24. Մայր Արաքսի... և 25. Ողջոյն քեզ Հայաստան: Այս 25 երգերը կը հրատարակվին մի տետրակում, ով կը ցանկան օգնելու այդ երգերի շուտով տպագրվելուն, թող անպայման դիմեն ինձ ամենայն տեղից հետեւեալ հասցէով. Тифлисъ. Ивану Артемьевичу Сузанаджянъ. Галлерея Арцруни въ музыкальную торговлю „Лира Италіи“

Ինձ մօտ վաճառվում են 4 հատ հայկական երգեր մի տետրակում դաշնամուրի համար ձայնագրած երգեցողութեամբ այն է 1. Անի քաղաք. 2. Ինձ համար չէ. 3. Ցուրտը փչեց և Ծիծեռնակ: Գինն է 1 րուբլի, օտարաքաղաքացիք 10 կոպէկ փոստի ծախք են վճարում: Եւ „Ցիմակի տաւիղ Ֆրէյդուն“ երգարանը, որի մէջ 50 հատ նոր ազգասիրական երգեր են բովանդակվում, գինն 30 կոպէկ: Ցանկացողք թող դիմեն ինձ հետեւեալ հասցէով:

Յովհաննէս Սուզանաճեանց

Մամուլի տակն է, և շուտով լոյս կը տեսնի Ս. Մանդինեանի հետեւեալ աշխատութիւնը. „ԿԵԱՆՔԻ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏ ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ“ ծխական դպրոցների 4-դ տարվայ դասընթացք, և միանգամայն 1-ն, 2-դ և 3 տարիների համար հրահանգ:

ԵՂԲԱՐՔ Կ. ԵՒ Ս. ՊՕՊՕՎՆԵՐԻ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՆԻՑ

ՄՕՍԿՎԱՅՈՒՄ

Գրասենեակը Կուզնեցկի կամրջի վրա, Կ. Ս. Պօպօվի տանը:

Պատիւ ունինք յայտնելու հասարակաց գիտութեան, որ մեր ֆիրմայի **ԹԷՅԻ** առեւտրի համար բաց արինք նորերումս նոր խանութներ և հետեւեալ քաղաքներում

ԽԱՐԿՈՎՈՒՄ—Պետրովսկի փողոցի վրա, սեփական տանը:
ԹԻՖԼԻԶՈՒՄ—Գօլօվինսկի պրօսպէկտի վրա, Միրիմանեանի տանը:
ՍԷՎԱՍՏՕՊՕԼՈՒՄ—Բօլշոյ-Մօրսկոյ փողոցի վրա, Կոգէն վաճառականի տանը:

Ինչպէս այս, նոյնպէս և առաջուայ խանութները **Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ, ՎԱՐՇԱՎԱՅՈՒՄ** և **ԿԻԷՎՈՒՄ**—թէյն որ առած է ֆունտերի, կէս ֆունտերի և քառորդ ֆունտերի, ուղարկվում է մեր գլխաւոր պահեստի խանութից՝ որ գտնվում է Մօսկվայում, Կլրասնօսէլսկի փողոցի վրա, սեփական տան: 11—30

Дозволено цензурою, Тифлисъ 4 Сентября 1881 года.

Типографія Главнаго Управленія Намѣстника Кавказскаго.